18 օգոստոսի 2011 թվականի N 1188 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1277-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

------------------------------------------------------------------------------------------------------------

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1277-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման հավելվածի 3-րդ կետը «հողի սանիտարական վիճակի ցուցանիշ» բառերից հետո լրացնել **«հողերի դեգրադացիա**՝ գործընթացների համախումբ, որը հանգեցնում է հողի որպես բնական միջավայրի բաղկացուցիչ տարրի, քանակական և որակական հատկանիշների վատթարացմանը, հողերի բնական-արտադրական նշանակության նվազեցմանը:» բառերով.

2) որոշման հավելվածը 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին և 11.2-րդ կետերով.

«11.1. Հողերի դեգրադացիան բնութագրվում է սահմանված ցուցանիշներով՝ համաձայն N 1.1. աղյուսակի.

Աղյուսակ N 1.1.

| Դիագնոստիկ ցուցանիշների անվանումը |
|---|
| 1 |
| Աբիոտիկ բերվածքի հզորությունը, սմ |
| Խորխոլների, փոսերի խորությունը մակերեսի նկատմամբ (առանց ամբողջականության խախտման) |
| Ֆիզիկական կավի պարունակության նվազում, % |
| Ֆիլտրացիայի գործակիցը, մ/օր |
| Քարքարոտությունը, ծածկույթի % |
| Բնահողային պրոֆիլի նվազում, % |
| Հումուսի պարունակության նվազում, % |
| Միկրոէլեմենտների միջին պարունա-կության նվազում (Mn. Co, Mo, B, Cu, Fe) |
| Շարժուն ֆոսֆորի պարունակության նվազում, % |
| Փոխանակելի կալիումի պարունակության նվազում, % |

| Դիագնոստիկ ցուցանիշների անվանումը |
|---|
| 2 |
| Թթվայնության աստիճանի նվազում, % |
| Բնահողային զանգվածի կորուստ, տ(հա)/տարի |
| Ներքնատակող/հողագոյացնող ապարի մերկցված մակերեսը, % ընդհանուր մակերեսից |
| Էրոզիայի ենթարկված բնահողերի մակերեսի ավելացում, % տարեկան |
| Տարածքի կտրտվածությունը ձորակներով, կմ/կմ$^2$ |
| Դեֆլյացիոն բերվածքային շերտի հզորությունը, սմ |
| Բուսածածկից զուրկ բնական հանդակների մակերեսը, % ընդհանուր մակերեսից |
| Թունավոր աղերի պարունակությունը վերին արգասավեր շերտում, %<br>- սոդայի հաշվառմամբ<br>- այլ տիպի աղակալումների համար |
| |

11.2. Հողերի դեգրադացման աստիճանը յուրաքանչյուր ցուցանիշի համար բնու-թագրվում է 5 մակարդակով՝

1) 0 – չդեգրադացված (չխախտված).

2) 1 – թույլ դեգրադացված.

3) 2 – միջին դեգրադացված.

4) 3 - ուժեղ դեգրադացված.

5) 4 – ծայրահեղ դեգրադացված (խախտված), այդ թվում հողային ծածկույթի վերացում:

Հողերի դեգրադացիայի աստիճանը բնութագրող դիագնոստիկ ցուցանիշների արժեքայնությունները սահմանված են N 1.2. աղյուսակում.

Աղյուսակ N 1.2.

Հողերի դեգրադացիայի աստիճանը բնութագրող դիագնոստիկ ցուցանիշների արժեքայնությունները

| Ցուցանիշները | Դեգրադացիայի աստիճանը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 0 | 1 | 2 | 3 | 4 |
| Աբիոտիկ բերվածքի հզորությունը, սմ | <2 | 2-10 | 11-20 | 21-40 | >40 |
| Խորխոլների, փոսերի խորությունը մակերեսի նկատմամբ (առանց ամբողջականության խախտման), սմ | <20 | 21-40 | 41-100 | 101-200 | >200 |
| Ֆիզիկական կավի պարունակության նվազում, % | <5 | 6-15 | 16-25 | 26-32 | >32 |
| Ֆիլտրացիայի գործակիցը, մ/օր | >1.0 | 0.3-1.0 | 1.0-0.3 | 0.01-0.1 | <0.1 |
| Քարքարոտությունը, ծածկույթի % | <5 | 6-15 | 16-35 | 36-70 | >70 |
| Բնահողային պրոֆիլի նվազում, % | <3 | 3-25 | 26-50 | 51-75 | >75 |
| Հումուսի պարունակության նվազում, % | <10 | 11-20 | 21-40 | 41-80 | >80 |
| Միկրոէլեմենտների միջին պարունակության նվազում (Mn. Co, Mo, B, Cu, Fe) | <10 | 11-20 | 21-40 | 41-80 | >80 |
| Շարժուն ֆոսֆորի պարունակության նվազում, % | <10 | 11-20 | 21-40 | 41-80 | >80 |
| Փոխանակելի կալիումի պարունակության նվազում, % | <10 | 11-20 | 21-40 | 41-80 | >80 |
| Թթվայնության աստիճանի նվազում, % | <10 | 11-15 | 16-20 | 21-25 | >25 |
| Բնահողային զանգվածի կորուստ, տ(հա)/տարի | <5 | 6-25 | 26-100 | 101-200 | >200 |
| Ներքնատակող/հողագոյացնող ապարի մերկցված մակերեսը, % ընդհանուր մակերեսից | 0-2 | 3-5 | 6-10 | 11-25 | >25 |
| Էռոզիայի ենթարկված բնահողերի մակերեսի ավելացում, % տարեկան | <0.5 | 0.6-1.0 | 1.1-2.0 | 2.1-5.0 | >5.0 |
| Տարածքի կտրտվածությունը ձորակներով, կմ/կմ$^2$ | <0.1 | 0.1-0.3 | 0.4-0.7 | 0.8-2.5 | >2.5 |
| Դեֆլյացիոն բերվածքային շերտի հզորությունը, սմ | <2 | 3-10 | 11-20 | 21-40 | >40 |
| Բուսածածկից զուրկ բնական հանդակների մակերեսը, % ընդհանուր մակերեսից | <10 | 11-30 | 31-50 | 51-70 | >70 |
| Թունավոր աղերի պարունակությունը վերին | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| արգասավեր շերտում, % | | | | | |
| - սոդայի հաշվառմամբ | <0.1 | 0.11-0.2 | 0.21-0.3 | 0.31-0.5 | >5.0 |
| - այլ տիպի աղակալումների համար | <0.1 | 0.11-0.25 | 0.26-0.5 | 0.51-0.8 | >0.8 |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. օգոստոսի
Երևան